ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

քաղաք Եղեգնաձոր **16-ը մայիս 2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Վարդանյանը, Եղիշե Նազարյանը, Ծովինար Սարգսյանը, Մուշեղ Ներսիսյանը, Սոնա Մարգարյանը, Կարեն Մանասերյանը, Մարատ Շահբազյանը և Տիգրան Նազարյանը:

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական Սամվել Օրդոյանը և համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկանուշ Ավագյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Ավագյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ ***ավագանին որոշեց.***

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու թիվ 7 նստաշրջանի չորրորդ՝ 2025 թվականի մայիսի 16-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 16-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

3) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականին ապրիլի 12-ի N 37-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

4) Հողամասերը համայնքի հաշվեկշռին ամրացնելու մասին:

5) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 14-ի թիվ 58-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

6) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 14-ի թիվ 63-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

7) Հողի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին:

8) Հողի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին:

9) Հողի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին:

10) Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

11) Համայնքային սեփականություն հանդիսացող հողը մրցութային կարգով կառուցապատման տրամադրելու մասին:

12) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու մասին:

13) Համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքը փոխանակությամբ օտարելու համար համաձայնություն տալու մասին:

14) Տեղական վճարի գծով արտոնություն սահմանելու մասին:

15) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 65-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ.</u>

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ և 33-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներով՝ ***ավագանին ո ր ո շ ե ց.***

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 21-ի թիվ 02-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի վարչական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ տողին (տող 1393) ավելացնել 3 878 000 (երեք միլիոն ութ հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամ և այն նպատակաուղղել 09.01.01 (նախադպրոցական

կրթություն) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 1.5-5 տարեկան կրթության և զարգացման առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների նախադպրոցական կրթության ապահովմանը, այդ թվում՝

ա. «Եղեգնաձորի թիվ 2 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ հաճախող թվով 6 (վեց) երեխաների համար՝ 969 500 (ինը հարյուր վաթսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,

բ. «Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ հաճախող թվով 12 (տասներկու) երեխաների համար՝ 1 939 000 (մեկ միլիոն ինը հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ,

գ. Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի «Արևիկ» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ հաճախող թվով 6 (վեց) երեխաների համար՝ 969 500(ինը հարյուր վաթսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

2) գործառնական դասակարգման 08.01.01 (հանգստի և սպորտի ծառայություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4221 (ներքին գործուղումներ) հոդվածից պակասեցնել 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ և այն ավելացնել 08.02.04 (այլ մշակութային կազմակերպություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4727 (կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից) հոդվածին՝ Եղեգնաձոր համայնքում գործող թվով 6 դպրոցների 9 ավարտական 12-րդ դասարանների վերջին զանգի միջոցառմանն աջակցելու համար, յուրաքանչյուր դասարանին՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 66-Ն)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 37-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***ավագանին որոշեց.***

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի՝ «Եղեգնաձոր համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու կարգը հաստատելու մասին» N 37-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 67-Ն)*

ԼՍԵՑԻՆ.

ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով թիվ ՀԿԴ/0082/02/24 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի և ՀԿԴ/0078/02/24 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով 2025 թվականի փետրվարի 26-ի վճիռները՝ ***ավագանին ո ր ո շ ե ց.***

1. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի թիվ ՀԿԴ/0082/02/24 և թիվ ՀԿԴ/0078/02/24 հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված վճիռներով Եղեգնաձոր համայնքին վերադարձված հողամասերը՝ համաձայն հավելվածի, ամրացնել համայնքի հաշվեկշռին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 68-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 58-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ ***ավագանին ո ր ո շ ե ց.***

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 14-ի՝ «Եղեգնաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդով օտարելու համար համաձայնություն տալու մասին» թիվ 58-Ա որոշման հիմնական մասի 1-ին կետում «10-014-0654-0002» կադաստրային ծածկագիրը փոխարինել «10-014-0654-0003» կադաստրային ծածկագրով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 69-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 63-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ ***ավագանին որոշեց.***

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 14-ի՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին» թիվ 63-Ա որոշման հիմնական մասի 1-ին կետում «10-015-0112-0001» կադաստրային ծածկագիրը փոխարինել «10-015-0112-0065» կադաստրային ծածկագրով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 70-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և քաղաքացի Գրիգոր Հովհաննիսյանի դիմումը՝ ***ավագանին որոշեց.***

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Գրիգոր Ռաֆիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.26 հա վարելահող հողատեսքից (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 01082023-10-0005, կադաստրային ծածկագիր՝ 10-014-0197-0011) 0.1 հա-ի նպատակային նշանակությունը փոխելու բնակավայրերի հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 71-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և քաղաքացի Արթուր Գասպարյանի դիմումը՝ ***ավագանին որոշեց***.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Վ. Զորավարի փողոց 36/1 հասցեում գտնվող, քաղաքացի Արթուր Տելեսիկի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.01 հա արդյունաբերական օբյեկտների (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 29102019-10-0004, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0135-0048) նպատակային նշանակությունը փոխելու բնակավայրերի հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 72-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և քաղաքացի Վալերիկ Հովհաննիսյանի դիմումը՝ ***ավագանին որոշեց***.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Վալերիկ Էդվարդի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.04023 հա վարելահող հողատեսքի (անշարժ գույքի նկատմամաբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 14022025-10-0013, կադաստրային ծածկագիր՝ 10-014-0056-0084) նպատակային նշանակությունը փոխելու բնակավայրերի հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 73-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ.</u>

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսությունների ցանկը սահմանելու մասին» թիվ 1667-Ն հրամանով հաստատված հավելվածի՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսությունների ցանկի 14 կետը և քաղաքացի Տիգրան Շիրինյանի դիմումները՝ ***ավագանին ո ր ո շ ե ց***.

1. Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Տիգրան Ենոքի Շիրինյանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղատնտեսական նշանակության 0.16098 հա (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16112023-10-0026, կադաստրային ծածկագիր՝ 10-042-0171-0002) և 0.11027 հա (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16112023-10-0017, կադաստրային ծածկագիր՝ 10-042-0170-0032) այլ հողատեսքերի նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն հիմնելու նպատակով (գինու գործարան):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 74-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] հոդվածով, 76-րդ հոդվածի 3-րդ մասով, 81-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետը՝ ***ավագանին ո ր ո շ ե ց.***

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.02 հա ընդհանուր օգտագործման հողը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 06062024-10-0019, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0046-0055) մրցութային կարգով տրամադրել կառուցապատման՝ 50 (հիսուն) տարի ժամկետով:

2. Սույն որոշման առաջին կետում նշված հողի կառուցապատման համար՝ մրցույթի մեկնարկային գին սահմանել 100 000 (մեկ հազար) ՀՀ դրամ, որը պակաս չէ տվյալ հողի (անշարժ գույք) հարկի տարեկան դրույքաչափից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 75-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ ***ավագանին ո ր ո շ ե ց.***

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 76-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 30-րդ և 32-րդ կետերը, քաղաքացի Հազարապետ Նազարյանի դիմումը, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 589-592 հոդվածների՝ ***ավագանին ո ր ո շ ե ց***.

1. Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 10-014-0166-0096 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.728 հա մակերեսով վարելահող հողատեսքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 23042025-10-0008) սեփականության իրավունքը փոխանակությամբ օտարելու համար տալ համաձայնություն, համաձայն որի՝ նշված հողատեսքը փոխանակվում է քաղաքացի Հազարապետ Աշոտի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող 10-014-0166-0065 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.73 հա վարելահող հողատեսքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 2077304) հետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 77-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով, քննարկելով Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող «Գետափի «Արևիկ» մսուր

մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի մայիսի 14-ի գրությունը՝ ***ավագանին որոշեց.***

1. «Գետափի «Արևիկ» մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի սան Տիգրան Զավենի Հարությունյանի ծնողական վճարի (տեղական վճար) նկատմամբ սահմանել արտոնություն՝ զրոյական դրույքաչափի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2025 թվականի մայիսի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 78-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ.</u>

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ ***ավագանին որոշեց.***

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշել՝ 2025 թվականի հունիսի 20-ը, ժամը՝ 18:30-ը, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 79-Ա)*

Նիստին ներկա ավագանու անդամներ՝

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ _____

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Մարինե Հովհաննիսյանը

_____